

Կ Ա Ր Ծ Ի Ք

Հասմիկ Գագիկի Հովսեփյանի՝ «Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում» թեմայով ատենախոսության մասին

Միջնադարյան հայ մշակույթի պատմության մեջ բացառիկ տեղ է գրավում գիտնական, փիլիսոփա, բանաստեղծ, քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (990-1058), որն իր բազմակողմանի գիտելիքներով, աշխարհիկ ու կրոնական գրականության բազմիմացությամբ մշտապես եղել է ժամանակի գաղափարական ու քաղաքական իրադարձությունների կենտրոնում: Իբրև լայնահայաց ու հանրագիտակ անհատականություն՝ Մագիստրոսը հետաքրքրված է եղել հին հայկական և հունական դիցաբանության, աստվածաբանության, փիլիսոփայության, պատմության, գրականության, արվեստի, բնագիտության և այլ հարցերով:

Բազմաժանր ու բազմաթեմատիկ են նաև նրա ստեղծագործությունները, խիստ արժեքավոր՝ նամակները: Անշուշտ, արվել և արվում են կարևոր ուսումնասիրություններ՝ հետազոտության կիզակետում ունենալով Մագիստրոսի ստեղծագործության պատմությունը, լեզուն, գեղագիտության ու ստեղծաբանական կենսոլորտի բազմակողմանի քննությունը, նրա երկերի կառուցվածքային ու ժանրատեսության խնդիրները: Հայտնի են Մագիստրոսի երկերի երկու ամբողջական հրատարակություններ՝ Կարապետ Կոստանյանցի (1910, Ալեքսանդրապոլ) և Գոհար Մուրադյանի (2012, Երևան) աշխատասիրությամբ: Մասնակի անդրադարձումներ կան նաև Ղ. Ալիշանի, Լ. Խաչերյանի, Շ. Գրիգորյանի, Վ. Թորգոմյանի և այլ երախտավորների ուսումնասիրություններում: Այնուամենայնիվ, Մագիստրոսի որոշ գրվածքներ դեռևս մնում են ուսումնասիրողների հետաքրքրության կենտրոնում և պահանջում են համակողմանի քննություն և պարզաբանում:

Հասմիկ Հովսեփյանի՝ «Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում» թեմայով ատենախոսությունը ըստ ամենայնի հաջողված փորձ է՝ նորովի քննաբանելու ու բացահայտելու հեղինակի ազգային-քաղաքական, ընդհանուր աշխարհայացքային ու գեղագիտական նկատառումների համակարգը:

Ատենախոսի ուսումնասիրության կենտրոնում Մագիստրոսի ստեղծագործություններն են, որոնք պահվում են մաշտոցյան Մատենադարանում: Գիտականորեն համակարգված և քննված են Մագիստրոսի մի շարք երկերի ձեռագիր և տպագիր աղբյուրները, ժանրային, կառուցվածքային ու բովանդակային առանձնահատկությունները, գիտաճանաչողական, ուսումնական, ուսուցողական, գործնական նշանակությունները: Հետազոտություն, որ ենթադրում է դժվար, ծավալուն աշխատանք, տեսական-մեթոդաբանական պատշաճ պատրաստություն, տեսական ընդհանրացումներն ու դրույթները ձևակերպելու գիտական բառապաշար, բնագիր լեզվի հստակ իմացություն, հարցի պատմության, ուսումնասիրվող թեմային առնչվող բազմահարուստ գրականության քաջատեղյակություն:

Իր առաջադրած նպատակներն ու խնդիրները իրագործելու համար ատենախոսը կատարում է թեմատիկ բաժանումներ: Բնագրերը վերլուծելու առաջադիր խնդրի անհրաժեշտությունից ելնելով՝ նա հայտնվում է ստեղծագործության մեկնության համալիր դաշտում, ինչը ենթադրում է թե՛ նախընթաց փորձի յուրացում, թե՛ ըստ դիտարկումների ընդհանրացումներ կատարելու կարողություն: Կիրառելով պատմահամեմատական, վերլուծական, համադրական և այլ մեթոդներ՝ ատենախոսը, ներածությունից սկսած, հանդես է բերում առաջադիր նյութի լայն ու համակողմանի իմացություն, սուր դիտողականություն, վերլուծելու, զուգադրելու, եզրակացություններ անելու հմտություն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ Հասմիկ Հովսեփյանը համակողմանիորեն ներկայացնում է հետազոտության թեմայի մշակվածությունը, մատնանշում հետազոտության արդիականությունն ու գիտական նորույթը, առաջադրում նպատակներն ու խնդիրները, գիտական վարկածը, անդրադառնում է հետազոտության իրականացման մեթոդներին, տեսական և գործնական նշանակությանը:

Ատենախոսության առաջին՝ **«Գրիգոր Մագիստրոսի գրական բարդ լեզվի բանասիրական քննությունը. հեղինակի երկերի շրջանառման, ժանրային գնահատության, ստեղծագործական եղանակի ընտրության հարցեր»** գլխում Հովսեփյանը անդրադառնում է Գ. Մագիստրոսի՝ ստեղծագործություններն

ամփոփող ձեռագիր աղբյուրներին, որոնց մեծագույն մասը, ըստ նրա, պահպանվում է Երևանում, 19 օրինակ՝ Երուսաղեմում, 6 օրինակ՝ Վենետիկում, 4-ական օրինակներ՝ Վիեննայում, Զմառոում, հատուկենտ օրինակներ՝ Մյունխենում, Փարիզում, ինչպես նաև Ավետիս Սանջյանի կազմած Միացյալ Նահանգների, Օքսֆորդի Բողեյան գրադարանի, Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության, Սեբաստիայի Ս.Նշանի վանքի ձեռագրական հավաքածուներում (Ատենախոսություն, էջ 22): Աշխարհագրական ընդգրկունությունը ցույց է տալիս, որ Հովսեփյանը հսկայածավալ տեղեկություններ քաղել է Մաշտոցի անվան Մատենադարանի Մայր ցուցակից, Վենետիկի, Երուսաղեմի, Վիեննայի, Փարիզի, Մյունխենի և այլ տեղերում պահպանվող ձեռագրացուցակներից:

Ատենախոսը գիտական բժախնդրությամբ առաջադրում և քննաբանում է Մագիստրոսի երկերի ավելի քան 80 գրչագիր օրինակներին աղերսվող հարցեր՝ համակարգային մոտեցմամբ բացահայտելով, թե պահպանված օրինակներն ի՞նչ միջավայրերում են ստեղծվել, ո՞ր վարդապետարաններում են կիրառվել, ովքե՞ր են շրջանառել դրանք, ի՞նչ առանձնահատկություններ ունեն հեղինակի երկերի ընդօրինակություններն ամփոփող մատյանները, ո՞ր թղթերն են հատկապես սիրվել ու գործածվել միջնադարում և այլն: Բազմակողմանի քննության արդյունքում ատենախոսը նկատում է, որ Մագիստրոսի երկերի հին օրինակները պահպանվել են Հերոմի վանքում, Գլաձորում, Սեբաստիայի Գրո անպատում: Սակայն հայ հոգևոր մտքի վրա առավել մեծ է եղել ազդեցությունը հատկապես 17-րդ դարում և հետո:

Հ. Հովսեփյանը Գր. Մագիստրոսի գրական դիմագիծն ամբողջացնելու համար հետազոտության առանցքային խնդիր է համարում նրա «բարդագույն գրվածքներն ընկալելն ու վերախմաստավորելը՝ իրենց կառուցվածքային և լեզվական հատկանիշներով» (գրեթե բոլոր ուսումնասիրողները հայտնում են Մագիստրոսի լեզվական խրթնաբանության մասին՝ Մ. Աբեղյան, Հ. Աճառյան, Յ. Մարկվարտ, Վ. Լանգլուա և այլք): Ուշագրավ է, որ հետազոտողը փորձ է անում ներկայացնելու Մագիստրոսի՝ կրոնական բովանդակություն ունեցող **«Յաղագս կրանաւորի ումեան, զոր Շապուհ անուանեն»** թղթի չափածո երկու բնագրերի («կէտ կարթիւ արտակիտի...», «գանգին բախին...») սեփական փոխադրությունը: Հատվածները, ըստ

ատենախոսի, «իմաստային ընկալման առումով խրթին» են և ունեն գիտական մեկնաբանության կարիք: Օգտվելով «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկու հատորներից, նաև «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» գրքից՝ Հովսեփյանը բանասիրական քննության նպատակով ներկայացնում է Գ. Մուրադյանի կազմած քննական բնագրից որոշակի տարբերություններ դրսևորող տարընթերցումների օրինակներ, ապա իր կատարած աշխարհաբար թարգմանությունը՝ համապատասխան հիմնավորումներով և աղբյուրների, ինչպես նաև բնագրերի գրական և ուսուցողական արժեքների մատնանշմամբ: Ատենախոսը գիտնականի նուրբ հոտառությամբ է իրականացնում բառերի վերծանումը՝ վերջնարդյունքում ամբողջացնելով չափածո գրվածքները:

Անշուշտ, գնահատելի ու գովելի են ատենախոսի մասնագիտական հմտությունները, լեզվամտածողության թափը, սակայն այդ ազնիվ ջանքերի արդյունքն առավել տեսանելի կլիներ, եթե մեկ-երկու անգամ իբրև համեմատության եզր տողատակում ներկայացվեր նաև Գ. Մուրադյանի կազմած նույն բնագիր հատվածների տարբերակները:

Հասմիկ Հովսեփյանը անդրադառնում է նաև Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողեան» ծավալուն չափածո ստեղծագործության ժանրի խնդրին՝ փորձելով հստակեցնել ժանրային գնահատության հարցը: Անդրադառնալով մի շարք ուսումնասիրողների ժանրային ձևակերպումներին և հիշյալ երկի հրատարակված տարբերակների և ձեռագիր աղբյուրներում ընդօրինակված վերնագրերին՝ ատենախոսը որոշակի հիմնավորումներով առանձնացնում է «տաղասացութիւն», «տաղաչափութիւն», «տաղ ասացեալ», «ոտանաւոր բանք», «ասացեալ ոտանաւորս» հասկացությունները, որոնք, ըստ նրա, ընդհանուր առմամբ կարելի է միավորել տաղ հասկացության տակ, որը «միջնադարյան չափածո խոսքի ընդհանուր անվանումն է՝ գրական այս տեսակը արձակ խոսքից տարբերակելու իմաստով»: Ատենախոսը առաջադրում է գիտական այն վարկածը, «**թե միջնադարյան ըմբռնմամբ Մագիստրոսի այս չափածո ստեղծագործությունը տաղ է և բոլորովին պատահական չէ, որ ձեռագիր ժողովածուներում ընդօրինակված լինելուց զատ՝ այս բնագիրը տեղ է գտել ՄՄ Հ^տ 1638 ձեռագիրը ներկայացնող «Տաղարանում», ընդ որում՝ այն պարունակում է Մագիստրոսի ստեղծագործություններից միայն**

«Հագարտողեանը»» (Ատենախոսություն, էջ 71): Նկատենք, որ ուսանավոր-տաղ հասկացությունները մեկնաբանելիս ատենախոսի ձևակերպումները երբեմն դառնում են հակասական: Կարծում ենք՝ քերականական և բովանդակային անհաջող ձևակերպման արդյունք է նաև հետևյալ միտքը. «Չմոռանանք, որ քրիստոնեական կրոնի դերն ու առավելությունն ընդգծելու, «Ավետարանների հեղինակությունը փրկելու մտադրությամբ»¹ է Մագիստրոսն ընդդիմանում արաբ բանաստեղծին, միաժամանակ իր դաստիարակչական և ուսուցողական նպատակով ձեռք է բերում ծրագրային նշանակություն՝ աղերսներ դրսևորելով Ն. Շնորհալու «Յիսուս որդին» երկի հետ» (Ատենախոսություն, էջ 72-73): Բնականաբար, Ն. Շնորհալու՝ 1152 թ. գրված պոեմը պետք է աղերսներ ունենար Մագիստրոսի 1045 թ. գրված երկի հետ:

Ատենախոսության առաջին գլուխը Հասմիկ Հովսեփյանը եզրափակում է «Գրիգոր Մագիստրոսի քերականական դասագրքի դերը Սյունյաց ուսումնագիտական կյանքում» հարցի քննությամբ: Հայտնի է, որ Մագիստրոսը հանրագիտակ մտավորական էր. նա ոչ միայն զբաղվել է գրական գործունեությամբ, այլև ծավալել է լուսավորական մեծ գործունեություն՝ հիմնադրել կրթական կենտրոններ, դասավանդել տարբեր առարկաներ, հոգևոր-կրոնական կրթությանը հավելել բազմակողմանի աշխարհիկ գիտելիքներ, կատարել թարգմանություններ, որոնցից սակավ մասն է պահպանվել միայն: Առանձնապես արժեքավոր է Մագիստրոսի՝ միջնադարյան քերականագիտության եզակի աղբյուր հանդիսացող «Մեկնութիւն Քերականիին», որը նվիրված է Դիոնիսիոս Թրակացու քերականական աշխատությանը: Այն գրվել է որպես դասագիրք և լայնորեն կիրառվել տարբեր կրթօջախներում: Հ. Հովսեփյանը ուշագրավ վերլուծություններ ու դիտարկումներ է անում «Մեկնութիւն Քերականիին» աշխատությանն առնչվող մի շարք հարցադրումների շուրջ, ուշագրավ մանրամասներ ներկայացնում, օրինակ՝ ի՞նչ նպատակով է Մագիստրոսը գրել մեկնությունը, ովքե՞ր են գործածել դասագիրքը, որտե՞ղ է առավելապես շրջանառվել այն և այլն: Նյութին քաջատեղյակ հետազոտողը երբեմն շրջանցում է ատենախոսության մեջ շրջանառվող հեղինակների ապրած ժամանակաշրջանը, անունների մասնավորեցումը՝ ամենայն հավանականությամբ համարելով դրանք հայտնի (օրինակ՝ 13-14-րդ

¹ Ներսիսյան Վ., նշվ. աշխ., էջ 119:

դդ. հայտնի է եղել Հովհաննես Երզնկացի անունով չորս վարդապետ, որոնցից երկուսը հեղինակ են եղել քերականության մեկնության):

Ատենախոսության երկրորդ՝ **«Գրիգոր Մագիստրոսի թղթերի առնչությունները հունական և հայկական դիցաբանությանը, հնախոսությանն ու ժողովրդական բանահյուսությանը»** գլխում Հ. Հովսեփյանը լայն պլանով, վերլուծաբար ներկայացնում է Գր. Մագիստրոսի՝ Թոռնիկ Մամիկոնյանին և Սյունյաց Հովհաննես արքեպիսկոպոսին ուղղած նամակների, ինչպես նաև թղթերում ամփոփված առակների բովանդակությունը՝ մանրամասն անդրադառնալով աստվածաշնչյան նկարագրություններին, հունական ու հայկական դիցաբանությանը, ժողովրդական բանահյուսությանը: Մեծապես գնահատելի է ատենախոսի հանձնառությունը՝ թղթերն աշխարհաբար թարգմանելու, ապա անհրաժեշտ մեկնաբանություններն ու գնահատությունները ամրագրելու, միաժամանակ տողատակի հարուստ ծանոթագրություններում ներկայացնելու նամակներին առնչվող գիտական հարուստ նյութ Աստվածաշնչից, հայկական, հունական դիցաբանությունից, հնախոսությունից ու ժողովրդական բանահյուսությունից: Ատենախոսը գիտական բժախնդրությամբ քննաբանում է Թոռնիկ Մամիկոնյանին ուղղված նամակներում Մագիստրոսի իմաստասիրական մեկնաբանությունները ծառերի, ձկների, ինչպես նաև եկեղեցուն առնչվող մի շարք կենսական հարցերի շուրջ, կատարում է կարևոր եզրահանգում. «...Առասպելական ձկների, ծառերի պաշտամունքով հագեցած մագիստրոսյան նամակները, որոնք աչքի են ընկնում աղբյուրների զանազանությամբ, խոսում են հին աշխարհի պաշտամունքային առարկաների վերաբերյալ նրա հետաքրքրության, երևակայության և խոր գիտելիքների մասին, որոնք սնվում են Աստվածաշնչից, հունական դիցաբանությունից» (Ատենախոսություն, էջ 115):

Գիտական նույն բժախնդրությամբ հայցորդն առանձին-առանձին ներկայացնում է Մագիստրոսի՝ Սյունյաց Հովհաննես արքեպիսկոպոսին ուղղված յոթ նամակների ամբողջական բովանդակությունը՝ ձկների, խնձորի, կաղնու, նժույգի մասին մեկնությունները հավելելով բազմահարուստ ծանոթագրություններով:

Ատենախոսության երկրորդ գլուխը Հովսեփյանն ավարտում է Մագիստրոսի թղթերում ամփոփված առակների՝ որպես գրական այդ տեսակի առաջին նմուշների բովանդակային, կառուցվածքային և աղբյուրագիտական առանձնահատկությունների զուգադրական վերլուծությամբ: Առակները գրականագիտության մեջ համեմատաբար քիչ են ուսումնասիրված, ուստի այս տեսանկյունից ատենախոսի քննությունը առավել գնահատելի է:

Աշխատանքի երրորդ՝ «**Գրիգոր Մագիստրոսի՝ Բագրատունիների հայոց թագավորության մասին թղթերը**» գլխում հետազոտողն անդրադառնում է պատմական բովանդակությամբ նամակներին՝ ուղղված Պետրոս Գետադարձ կաթողիկոսին, Գագիկ II արքային և Սարգիս Անեցի վարդապետին: Նամակները Մագիստրոսի ազգային-քաղաքական հայացքների, պետական մտածողության ուշագրավ վկայություններ են: Ժամանակագրական հերթագայությամբ թղթերը բաժանելով երեք շրջանի՝ Հովսեփյանը դրանք քննում է 11-րդ դարի պատմաքաղաքական բարդ և հակասական իրադարձությունների, նաև ժամանակի հայ պատմիչների բերած փաստարկումների համատեքստում, հիշատակում մի շարք պատմաբանների ու գրականագետների հակասական տեսակետները՝ իրավացիորեն հաստատելով Մագիստրոսի՝ հայրենասեր լինելու մեկնակետը:

Ատենախոսը նամակների բովանդակության վերլուծությամբ ըստ էության բացահայտում է Պահլավունի իշխանի ազգային մտածողության նրբերանգները, հոգևոր-քաղաքական դիրքորոշումը, Բագրատունիների թագավորությունը կորստից փրկելու ճիգերը, կապերն ու առնչությունները ժամանակի քաղաքական ու հոգևոր այրերի հետ, վերջիններիս հետ ունեցած տարաձայնությունները հարթելու և փոխառնչվելու ջանքերը. Մագիստրոսը բազմագիտակ ու բարեկիրթ մտավորականին վայել ոչ միայն բարձրաձայնում է իր ազնիվ մտահոգությունները՝ շահարկվող անարդար քաղաքական գնահատականների, մեղադրանքների, հալածանքների շուրջ, այլև ներկայանում իբրև բացառիկ հոգևոր այր, որ անօրեն ու չար մեղադրանքներին պատասխանում է միայն աստվածային խոսքի միջոցով և աղոթքով:

Անդրադառնալով «Առ տէր Պետրոս ի ժամանակի խուժան յառնելոյ ի քաղաքին ի վերայ նորա՝ բան մխիթարական եւ հարցումն Անանիայի գրոց Շիրակայնոյն, զոր Մեծ Քննիկոնն անուանեն» թղթին՝ ատենախոսը մեծապես արժևորում է այն՝ հատկապես մատնանշելով Մագիստրոս գիտնականի մտահոգությունը նաև Անանիա Շիրակացու գրվածքների ըմբռնման ու գնահատման վերաբերմամբ: «Վերջինիս այս արժեքավոր նախաձեռնությունը փրկել է Շիրակացու մատյանը կորստից», - եզրակացնում է Հովսեփյանը (Ատենախոսություն, էջ 142):

Ի թիվս մյուս նամակների՝ Մագիստրոսի՝ Սարգիս վարդապետին ուղղված «Պատասխանի Սարգիս վարդապետի եւ ողբս ի վերայ Արամեան նահանգի» (ԺԹ) թուղթը ևս ատենախոսի ուշադրության կենտրոնում է: Այն ուշարժան է ոչ միայն պատմական իրադարձությունների, այլև գրական ժանրի տեսակետից: Նրանում կան հատվածներ, որոնք բնորոշ են ողբի ժանրին: Մագիստրոսի *ողբը* ծնվում է հերոսական անցյալի և անփառունակ ներկայի հակադրությունից: Վերլուծություններին հետևում է ատենախոսի միանգամայն տրամաբանական դիտարկումը. «Պատմական խնդիրներ արծարծելիս ընդգծվում են սուրբգրային աղերսներն ու խորենացիական «Ողբի» դրսևորումները, որոնք շատ հարազատ են հեղինակին» (Ատենախոսություն, էջ 155):

Ատենախոսության վերջում Հ. Հովսեփյանը ներկայացնում է հետազոտության արդյունքներն ամփոփող եզրակացություններ և մեծաձավալ ու հարուստ գրականություն, որն ամբողջապես արտացոլված է աշխատանքում:


Հ. Հովսեփյանի ուսումնասիրությունն աչքի է ընկնում համապատասխան կարգա-հասկացութային բառապաշարով, գիտահետազոտական պատշաճ մակարդակով, գրագետ շարադրանքով: Ատենախոսն ամբողջությամբ տիրապետում է իր հետազոտության թեմային և նրա նրբերանգներին, քաջատեղյակ է թեմային առնչվող բազմահարուստ գրականությանը:

Սեղմագիրը, ինը հրապարակումները (ութ հոդված, մեկ մենագրություն) արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը: Նկատված փոքրաթիվ ոճական անհարթությունները, տեխնիկական վրիպակները բոլորովին

չեն ստվերում կատարված զգալի աշխատանքը, որն անկասկած կարող է տեսական ու գործնական նշանակություն ունենալ ինչպես Մագիստրոսի ստեղծագործական աշխարհը հետազոտողների համար, այնպես էլ գրականության զարգացման պատմության շղթան ամբողջացնելու տեսանկյունից:

Հասմիկ Հովսեփյանի՝ «**Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործությունները Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում**» խորագրով աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի աստիճանաշնորհման կանոնակարգի VII կետի (գիտությունների թեկաճուի աստիճանի) պահանջներին, իսկ ատենախոսը արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկաճուի գիտական աստիճանին՝ Ժ.01.01 – «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ: Ուստի միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Գրականագիտության 003 մեծահարգ գիտական խորհրդին՝ Հ. Հովսեփյանին շնորհել իր հայցած գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝  Ե. Մնացականյան /բ. գ. դ., դոցենտ/

Եվա Մնացականյանի ստորագրությունը հաստատում եմ Հ. Ռոսկանյան

/ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի տնօրեն, բ. գ. թ./

20 մայիսի, 2024 թ.